Տ. ՀԵՌՈՒՄ ՔՀՆ. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

ՌՈՒՄԻՆԱՀԱՅ ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐԻ ԴԵՐԸ ԺԶ.-ԺԷ. ԴԴ.

Անիի անկումից հետո՝ 1045 թ., մեծ թվով հայեր գաղթեցին Ղրիմ, այնտեղից՝ Լեհաստան, որտեղ զորավոր գաղութ հիմնեցին՝ կրոնական ու մշակութային կենտրոն դարձնելով Լվով[1] քաղաքը: Համաձայն ավանդության, որը գրի է առնվել Աբրահամ Գ. Կրետացու (1734-1737 թթ.) Պատմության հավելվածում, ինչպես նաեւ Նոր Նախիջեւանի Նիսվիթա գյուղի՝ 1694 թ. գրված «Յայսմաւուրքի» հիշատակարանում[2], նշվում է՝ Անիի անկումից հետո անեցիների մի մասը գաղթում է Ատրպատական, ապա այնտեղից անցնում Ղրիմ: Երբ թուրքերը գրավում են Ղրիմը, տեղի հայերը գաղթում են Ուկրաինա, Լեհաստան, ապա՝ Մոլդովա, Ռումինիա, եւրոպական մի շարք երկրներ: Լեոն այս մասին հիշատակություն ունի. «Անին մոռացված էր, բայց անեցին չէր մոռացվում: Պարծանք էր անեցի լինելը, որովհետեւ Անին մի բարձր կուլտուրական, ընտրյալ, ազնիվ եւ զարմանալի ընդունակ ժողովրդի անուն էր: Հայերի մեջ դեռ այսպիսի բարձր ազնվական տիպողոս ոչ մի նահանգ, ոչ մի քաղաք չէր ստեղծել: Անեցի լինելը մեծ պարծանք էր, թեեւ իրապես անեցի լինելը նշանակում էր լինել հայրենիքից զուրկ թափառական, օտար երկնքի տակ դեգերող: Դառն ճակատագիրը քշում էր նրան ամեն տեղ, դրա պես գաղթական չէր եղել նույնիսկ հայերի նման ազգի մեջ»[3]:

ԺԳ.-ԺԴ. դդ. մեծ թվով հայեր Լեհաստանից դեպի հարավ՝ Տրանսիլվանիա[4] եւ Մոլդովա են տեղափոխվում:

ԺԶ.-ԺԷ. դդ. Մոլդովան[5] իբրեւ գյուղատնտեսական եւ արդյունաբերական

1 Մինաս Բժշկյանը, շեշտելով լեհահայերի անեցի լինելը, գրում է՝ անեցիները Լեհաստան են եկել եւ կենտրոնացել Լվովում, որտեղ նշանավոր կառույցներ են հիմնել, հաստատել եպիսկոպոսական աթոռ: Գրելով, թե անեցիները նախ Լեհաստան եկան՝ Բժշկյանը փորձում է հիմնավորել Արեւելյան Եւրոպայի հայոց եպիսկոպոսական կենտրոնի՝ Լվովում հաստատված լինելը: Այսպիսով, Լվովի հայ համայնքը համարվում է անեցիների շառավիղը. տե՛ս **Մինաս Բժշկեան**, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, Վենետիկ, 1830, էջ 94:

2 Տե՛ս «Աբրահամ Կաթողիկոսի Կրետացւոյ Պատմագրութիւն», Վաղարշապատ, 1872, էջ 109. նաեւ՝ «Դիւան Հայոց պատմութեան», աշխատ.՝ Գիւտ աւ. քհն. Աղանեանցի, գիրք Թ., Թիֆլիս, 1911, էջ 489-490: Իսկ Նոր Նախիջեւանի Նիսվիթա գյուղում պահվող հիշատակարանում ասվում է. «Որովհետեւ մենք Պահլաւունիների սերունդն ենք՝ թագաւորանիստ Անի մեծ քաղաքից, որը Շիրակաւան գաւառում է՝ Շարայի դուռը, Բագրատունեանց գահանիստը, որովհետեւ թագաւորանիստ մեր մեծ Անին իշխանների եւ ազնուականների բնակութեան քաղաքն էր». տե՛ս նաեւ՝ «Դիւան Հայոց պատմութեան», գիրք Թ., մաս Ա., Յովսէփ Կթղ. Արղութեան, աշխատ.՝ Գիւտ քհն. Աղանեանց, Թիֆլիս, 1911, էջ 490:

3 **Լեո**, Անի, Երկերի ժողովածու, հտ. Ը., Երեւան, 1985, էջ 185:

4 Տե՛ս **Դեմետրիոս Տանի**, Արեւելեան Հայք ի Պուքովինա, թրգմ.՝ **Ն. Գ. Գալէմքէարեան**, Վիէննա, 1891, էջ 75:

5 Մոլդովան (Moldova) պատմական շրջան է Ռումինիայի հյուսիսարեւելյան մասում՝ Արեւելյան Կարպատյան լեռների եւ Դրուտ գետի միջեւ: Սահմանակից է Մունթենիային, Տրանսիլվանիային, Հարավային Բուկովինային: Մոլդովայի հյուսիսային մասը կոչվում է Բուկովինա, որի կենտրոնը Սուչավա քաղաքն է. տե՛ս

արտադրանքի խոշոր մատակարար, սերտ կապեր ուներ հարեւան պետությունների հետ: Վերոնշյալ ժամանակաշրջանում ընդլայնվում են առեւտրական կապերը Լվով[6] քաղաքի եւ Ռեչ Պոսպոլիտայի կազմի մեջ մտնող արեւմտաուկրաինական մյուս կենտրոնների հետ[7]: Մոլդովայից Լվովի շուկա ներմուծվող ապրանքների մեջ կարեւոր տեղ էին զբաղեցնում գինին, մեղրը, մեղրամոմը, ընկույզը, ծխախոտը, ինչպես նաեւ կաշին եւ սեկը (սափյան): Պետք է նշել նաեւ, որ այս ժամանակաշրջանում Լվովից եւ արեւմտաուկրաինական մյուս քաղաքներից Մոլդովա էին արտահանվում մետաղներ, գամ, մահուդ, կտավ, մետաքսյա եւ բամբակյա գործվածքներ, գլխարկներ, ապակյա, հախճապակյա եւ ոսկյա զանազան իրեր: Մոլդովայի եւ արեւմտաուկրաինական քաղաքների միջեւ առեւտրական կապերի ձեւավորմանը նպաստում էին նաեւ տեղի հայ վաճառականները[8]:

Մոլդովայի տարածքում հայերը բնակություն էին հաստատել, երբ այնտեղ դեռեւս պետականություն չէր կազմավորվել[9]: Հայերի մի մասը գաղթել էր Հայաստանից, մյուս մասը՝ Ղրիմից[10]: ԺԲ.-ԺԳ. դարերում հայերը կազմում էին Ղրիմի բնակչության զգալի մասը[11]: Հայ գաղթականության հոսքը դեպի Մոլդովա մեծանում է պետականության կազմավորումից հետո: Մի շարք իշխաններ, տեսնելով տնտեսական վերելքը լեհական այն քաղաքների, որտեղ հայկական գաղթօջախներ կային, ձգտում էին հայերին մշտապես բնակեցնել Մոլդովայում: Այսպես օրինակ՝ Ալեքսանդր Ա. Բարեպաշտը 1407 թ. առաջարկում է նվազեցնել հարկերի գանձումը հայ վաճառականներից, եթե նրանք բնակություն հաստատեն մոլդովական Սուչավա[12], Սերետ եւ Չերնովցի քաղաքներում: Այս շրջանում Լեհաստանից Սուչավա է գաղթում մոտ 700 հայ ընտանիք[13]: Նույն Ալեքսանդր Ա. իշխանը 1418 թ. նպաստում է 3000 հայ ընտանիքի՝ Սուչավա, Բելգորոդ, Բոտոշան, Դորոգոյ, Խոտին, Վասլույ, Գալաց քաղաքներում վերաբնակեցմանը[14]. թուրքերի կողմից Կաֆան գավթելուց հետո (1475 թ.) դեպի Մոլդովա է ուղղվել ղրիմահայերի մի նոր հոսք[15]:

Նեթում քհն. Թարվերդյան, Սուչավայի հայկական հրաշքը. «Էջմիածին», 2014, Դ., էջ 122:

6 Հոգեւոր ժառանգորդությունը նվիրագործելու համար ասվել է, թե Լվովի եկեղեցական սպասքի մի մասը Անիից է բերված. «Եկեղեցւոյ հին սպասներ, զորս անեցիք հետերնին բերած են, եւ գրչագիր գեղեցիկ Աւետարան մը 1010 թուականէն». տես «Ակնարկ մը լեհահայոց վրայ». «Հանդէս ամսօրեայ», Վիէննա, 1908, էջ 302:

7 Տես **Ծ. Հ. Мохов**, Молдавия в эпохи феодализма, Кишинев, 1964, էջ 128-132, 237-240:

8 Տես **В. К. Восканян**, Древняя Русь и Украина в судьбах армян, сборник материалов «Исторические связи и дружба украинского и армянского народов», Ереван, 1961, էջ 68-71. նաեւ՝ **Վարդան Վարդապետ**, Աշխարհացոյց, քնն. բնագիրը՝ Հ. Պէրպեանի, Բարիզ, 1960, էջ 75:

9 Տես **Vlad Banateanu**, Armenii in istoriasi in viata Romineasca, Bucurest, 1938, էջ 10-13:

10 Տես անդ, էջ 12-17:

11 Տես **В. К. Восканян,** Древняя Русь и Украина в судьбах армян, сборник материалов «Исторические связи и дружба украинского и армянского народов», էջ 68:

12 Տես **Նեթում քհն. Թարվերդյան**, Սուչավայի հայկական հրաշքը. «Էջմիածին», 2014, Դ., էջ 123:

13 Տես **Ն. Ճ. Սիրունի**, Հայ Եկեղեցին ռումեն հողի վրայ, Նիկոլա Յորգա, Ս. Էջմիածին, 1966, էջ 97:

14 Տես **Xenopol**, Istoria Rominiei, v. II, Iasi, 1889, էջ 251. նաեւ՝ **B. P. Hasdeu**, Elymologicum magnum, v. II, էջ 1697. **H. Dj. Siruni**, Tara voevodului Stefan, Bucurest, 1941, էջ 3:

15 Տես **Vlad Banateanu**, Armenii in istoriasi in viata Romineasca, էջ 18. նաեւ՝ **N. Iorga**, Istoria comertului



Այսպիսով, ԺԴ.-ԺԵ. դարերում հայերը բնակություն են հաստատում Մոլդովայի շատ քաղաքներում: ԺԵ. դ. նրանց զգալի մասը բնակվում է Բելգորոդում: Եւ դա միանգամայն բնական է, եթե նկատի ունենանք այդ քաղաքի դերը Մոլդովայի տնտեսական կյանքում: Թուրքիայում ֆրանսիական դեսպան Ջիլբերտ դը Լաննուան, որը 1421 թ. եղել էր Բելգորոդում, հետագայում իր հուշագրություններում նշում է՝ այդ քաղաքում կար հայկական գաղութ, որն ուներ իր եկեղեցին[16]: Իսկ ֆրանսիացի նշանավոր ճանապարհորդ Վ. Վավրինը, որը Մոլդովա էր այցելել 1445 թ., ուշադրություն էր դարձրել այն հանգամանքին, որ Բելգորոդում հայերին[17] պատկանող շատ նավեր կային. վերոնշյալ քաղաքը 1460 թ. դարձել է հայերի եպիսկոպոսական նստավայրը[18]:

Հիշատակվում է, որ ԺԴ. դ. կեսերին Բոտոշանի հայերը ունեին իրենց եկեղեցին[19], իսկ 1401 թ. Սուչավայում հիմնվում է հայերի եպիսկոպոսական աթոռը[20]: Սուչավայի հայ բնակիչներն ունեին դատական գործերով զբաղվող իրենց շոլտուզը[21]: Բազմաթիվ հայ ընտանիքներ էին ապրում նաեւ Խոտինում: Այս քաղաքը պատմական աղբյուրներում (1418 թ.) հիշատակվում է որպես հայ գաղթականների կենտրոն[22]: Ոչ այնքան ստույգ տվյալների համաձայն՝ ԺԴ. դ. վերջում Ռոման քաղաքում բնակություն է հաստատում մոտ 500 հայ ընտանիք[23]: ԺԵ. դարում զգալի թվով հայեր էին ապրում մոլդովական Սերետ[24] եւ Կիլիա[25] քաղաքներում: Ցավոք, այդ ժամանակաշրջանում մոլդովական քաղաքներում ապրող հայերի թվաքանակի վերաբերյալ ճշգրիտ տվյալներ չունենք: Սակայն դատելով այն իրողությունից, որ հայերն ունեին իրենց իրավունքները, եկեղեցիները եւ եպիսկոպոսական նստավայրը, կարելի է եզրակացնել, որ նրանք կազմում էին մոլդովական քաղաքների բնակչության զգալի մասը: Վերաբնակեցվածների տնտեսական գործունեությունը բազմազան էր: Ղրիմի, Ուկրաինայի, Լեհաստանի իրենց հայրենակիցների նման[26] հայերն այստեղ զբաղվում էին առեւտրով, արհեստներով, երկրագործությամբ, անասնապահությամբ եւ խաղողագործությամբ՝ դրանով իսկ նպաստելով իրենց «նոր հայրենիքի» տնտեսական զարգացմանը: Անասնապահությամբ զբաղվող հայերը հիմնականում ձիեր էին բուծում: Հայ արհեստավորների մի մասն զբաղվում էր կաշվի մշակությամբ եւ կաշվեղենի արտադրությամբ: Այսպես՝ 1476 թ. մի փաստաթղթի համաձայն՝

Rominesc, v. I, Bucurest, 1937, էջ 120:

16 Տե՛ս "Arhiva Istorica a Rominiei", v. 1, partea 1, էջ 130. "Of Voyages et ambassades de Messire Guillebert de Lannoy en 1309-1450", Mons. 1840:

17 Տե՛ս **N. Iorga**, Studii Istoricea supra Chilieisi Cetatii Albe, Bucurest, 1899, էջ 192:

18 Տե՛ս **Ղ. Ալիշան**, Կամենից, Վենետիկ, 1896, էջ 225:

19 Տե՛ս **N. Sutu**, Notions statistiques sur la Moldavie, Iassy, 1849, էջ 86:

20 Տե՛ս **P. Panailescu**, Hrisovul lui Alexandru cel Bun. Episcopie armeana din Suceava, Bucurest, 1935, էջ 4:

21 Տե՛ս **Vlad Banateanu**, նշվ. աշխ., էջ 22:

22 Տե՛ս անդ, էջ 26:

23 Տե՛ս անդ, էջ 30:

24 Տե՛ս **N.Iorga**, Studiisi documente, v. XXIII, էջ 300:

25 Տե՛ս **N. Iorga**, Istoria comertului Rominesc, v. 1, էջ 97:

26 Տե՛ս **В. К. Восканян**, նշվ. աշխ., էջ 68:

Լվովի հետ առեւտրական կապեր պահպանող հայ վաճառականների շարքում հիշատակվում են սուչավացի կաշեգործներ Սարգսի եւ Յակուբի անունները[27]: Հետեւաբար, որոշ արհեստավորներ զբաղվում էին թե՛ապրանք արտադրելով, թե՛ դրանք իրացնելով: Հայ վաճառականներն ու արհեստավորներն այդ ժամանակ կազմում էին մոլդովական քաղաքների բնակչության զգալի մասը[28]: ԺԵ. դարում Մոլդովայի ու Լվովի միջոցով արեւմտաեւրոպական երկրներ էին արտահանվում մեծ քանակությամբ արեւելյան ապրանքներ: Նույն այդ ճանապարհով Արեւմուտքից արեւելյան շուկաներ էր փոխադրվում արհեստագործական արտադրանք: Մոլդովայի եւ Լվովի միջեւ ծավալված առեւտրում էական դեր ունեին ինչպես արեւմտաուկրաինական, այնպես եւ մոլդովական քաղաքների հայ վաճառականները: Այսպես՝ ԺԵ. դ. կեսերին Լվովի հետ առեւտրական կապեր են հաստատում սուչավացի հայեր Սահակն ու Ագոպսան[29]: 1462-1472 թթ. Լվովում առեւտրական գործունեություն էր իրականացնում նաեւ սուչավացի հայ Կոկշան: 1472 թ. Սուչավայի մի խումբ հայեր Լվովի քաղաքացիություն են ընդունում[30], ինչը այդ քաղաքում անարգել առեւտուր անելու հնարավորություն է ընձեռում: ԺԵ. դ. երկրորդ կեսին հայտնի էին սերետցի հայ վաճառականներ Շիլկոն եւ Գրիգորին[31]: Կան բազմաթիվ փաստաթղթեր, որոնք վկայում են Լվովի եւ արեւմտաուկրաինական այլ քաղաքների հետ բելգորոդցի հայ վաճառականների առեւտրական կապերի մասին[32]: Լվովում, Կամենեց-Պոդոլսկում եւ այլ քաղաքներում արեւելյան ապրանքները, որոնք տարանցիկ ճանապարհներով արտահանվում էին կամ հայ վաճառականների կողմից բերվում մոլդովական քաղաքներ, կոչվում էին «հայկական ապրանքներ»[33]:

Ինչպես նշվեց, քննարկվող ժամանակաշրջանում հայկական ստվար բնակչություն ունեցող առավել խոշոր քաղաքներից էր Սուչավան: 1608 թ. այս քաղաք այցելած Սիմեոն Լեհացու տվյալների համաձայն՝ քաղաքի հայոց համայնքը հաշվվում էր 300-400 ընտանիք. «Եւ ջուր մեծ երթայր շուրջ զքաղաքաւն: Եւ կայր յայս քաղաքս երեք ջրոս հարիւր տուն հայի...»[34]: Ըստ Կաթոլիկ Եկեղեցու գործիչ Մ. Բանդինիի, որը Սուչավայում եղել էր ավելի ուշ՝ 1640 թ., քաղաքում ապրում էին 20 հազար մոլդովացի, 3 հազար հայ. հայտնում է նաեւ, որ մոլդովացիները քաղաքում ունեին 17, իսկ հայերը՝ 4 եկեղեցի[35]: Եթե նույնիսկ հաշ-

27 Տե՛ս **N. Iorga**, Studiisi documente, v. XXIII, էջ 310:

28 Տե՛ս **Н. А. Мохов**, Молдавия в эпохи феодализма, էջ 130:

29 Տե՛ս **N. Iorga**, Studiisi documente, v. XXIII, էջ 297, doc. XV, էջ 310, doc. LVII, էջ 311, doc. LXII:

30 Տե՛ս անդ, v. XXIII, էջ 293, doc. IX, էջ 296, doc. XIV, էջ 306, doc. XLVI, էջ 307, doc. XLVIII, էջ 308-309:

31 Անդ:

32 Տե՛ս **N. Iorga**, Studii Istorice asupra Chiliei si Cetatii Albe, Apendice si documente, էջ 282-296:

33 **В. В. Грабовецкий**, Армянские поселения на западноукраинских землях, сб. материалов «Ист. Связи и дружба украинского и армянского народов», Киев, 1965, էջ 96:

34 «Սիմէոն դպրի Լեհացւոյ Ուղեգրութիւն, տարեգրութիւն եւ յիշատակարանք», աշխ.՝ **Հ. Ն. Ակինեան**, Վիէննա, 1934, էջ 4:

35 Ծաղկուն կյանքով ապրող Սուչավայում 1629 թ. սպասավորել է 11 հայ հոգեւորական: Նրանց անունները թվարկվում են նույն թվականին Հաճկատարում գրված մի ձեռագիր հիշատակարանում. տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ», աշխ.՝ Վ. Հակոբյան, հտ. Բ., Երեւան, 1978, էջ 360-361. **V. A.**

վի առնենք քաղաքի հայկական բնակչության վերաբերյալ բերված փվյալների հնարավոր անճշտությունը, այնուամենայնիվ, այդ տեղեկությունները վկայում են, որ ԺԶ.-ԺԷ. դդ. Սուչավայում հայ սրվար համայնք կար: Օրինակ՝ քաղաքում կային մի շարք փողոցներ, որոնք կոչվում էին հայկական, իսկ մեկ այլ պատմական փաստ վկայում է, որ մոլդովական իշխան Ե. Մոգիլայի՝ 1597 թ. հունվարի 22-ի հրամանագրում նշվում է, որ սուչավացի հայ խոշոր վաճառական Բոգդանը իշխանից ստացել է մի «...տուն Մեծ հայկական փողոցում»[36]: Ինչպես Արևմտյան Ուկրաինայի քաղաքներում, նույնպես եւ Սուչավայում հայոց գաղութը ԺԶ.-ԺԷ. դդ. իրավական տեսանկյունից առանձին համայնք էր, որն ուներ որոշակի ինքնուրույնություն: Ինչպես երեւում է Սուչավայի «վորնիկի» 1601 թ. հունիսի 24-ին Բիստրիցա ուղարկած նամակից, քաղաքում կար «հայ շոլտուզ՝ իր խորհրդականներով»[37]: Հայ շոլտուզի մասին հիշատակություններ են հանդիպում նաեւ ավելի ուշ շրջանի փաստաթղթերում: Այսպես օրինակ՝ առքի եւ վաճառքի վերաբերյալ մի արձանագրության մեջ, որը կազմված է 1670 թ. դեկտեմբերին, նշվում է, որ «Սուչավա քաղաքի հայ շոլտուզ Կիրիկան» վաճառում է խաղողի այգի[38]: Ինչպես նկատում ենք, Սուչավայի հայ բնակիչներն ունեին տարբեր զբաղմունքներ: 1597 թ. հունվարի 22-ի իշխանական հրամանագրից եւ այլ փաստաթղթերից երեւում է, որ քաղաքի շատ հայ բնակիչներ ունեին խաղողի այգիներ, արոտավայրեր, լճակներ, զբաղվում էին ոչ միայն առեւտրով ու արհեստներով, այլեւ՝ գյուղատնտեսությամբ[39]:

Պատմական տեղեկությունները վկայում են, որ Սուչավայի հայերի մեջ կային ականավոր դիվանագետներ եւ թարգմանիչներ: Օրինակ՝ սուչավացի հայ Նիկոլայ Բայդուլովիչը հիանալի տիրապետում էր արեւելյան մի քանի լեզվի, եւ 1567 թ. ընտրվում է Լվով քաղաքի թարգմանիչ[40]:

ԺԶ.-ԶԷ. դդ. Մոլդովայում մեծ զարգացում է ապրում կաշվի մշակությունը, որի կարեւորագույն կենտրոններից էին Յաշը եւ Սուչավան: Վերջինս լայն ճանաչում է գտնում հայտնի սեկի արտադրության շնորհիվ: Այդ արտադրանքը մեծ պահանջարկ էր վայելում արեւմտաուկրաինական քաղաքներում: Նկատելի է, որ ԺԶ.-ԺԷ. դդ. սուչավացի հայազգի արհեստավորների եւ վաճառականների զգալի մասը զբաղվում էր կաշվի ու սեկի առեւտրով: Ակնհայտ է, որ այս ժամանակաշրջանում Լվովում արհեստագործական որոշ ճեռնարկություններ մասնագիտացել էին կաշվե զանազան իրերի արտադրության մեջ, այն է՝ կոշիկ, կապարճ, ուղեպարկեր, թամբ եւ այլն: Լվովի շուկա գալիս էին Ռեչ Պոսպոլիտայի այլ քաղաքներից եւ արտասահմանից ժամանած վաճառականներ եւս, որոնք

Urechia, Codex Bandinus. An. Ac. Rom., seria II, v. XVI, Bucurest, 1895, էջ 249:

36 **N. Iorga**, Studiisi documente, v. VI, էջ 636-637:

37 **Տ. Ներսում բին. Թարվերդյան**, Սուչավայի հայկական հրաշքը, էջ 123. նաեւ՝ **E. Hurmuzaki**, Documente, v. XV, partea 2, էջ 784, doc. MDCXII:

38 Տե՛ս **N. Iorga**, Studiisi documente, v. VII, էջ 379, doc. 14:

39 Տե՛ս անդ, v. VI, էջ 637, doc. XVI. "Documente privind Istoria Rominiei", A. veacul XVI, v. III, էջ 78, A. veacul XVII, v. I, էջ 95-96:

40 Տե՛ս **Cadok Baracz**, Zywoty stawnych armian w Polsce, Lwow, 1856, էջ 56-57:

գնում էին մեծ քանակությամբ կաշի, սեկ եւ մորթիներ[41]: Այսպես՝ 1584 թ. սուչավացի հայ Պոպովիչը Սնյատինում վաճառում էր զանազան ապրանքներ, այդ թվում նաեւ՝ «150 սեկ»[42]: Իսկ Խաչերիսը 1599 թ. Լվովին մատակարարում էր սեկի կաշի[43]: Լվովի քաղաքային խորհրդի 1621 թ. արձանագրություններից մեկից տեղեկանում ենք, որ այդ ժամանակ Լվովի մի խումբ վաճառականներ «սուչավացի վեց հայ վաճառականներից 1828 զլոտի եւ 24 գրոշի սեկ»[44] են գնել: 1631 թ. տեղի ունեցած դատավարության ժամանակ լվովցի հայտնի վաճառական Ա. Ստրելեցկին խոստովանում է, որ սուչավացի հայերին՝ գնած սեկի դիմաց պարտք է մնացել 1800 զլոտի[45]: Վերոնշյալ քաղաքի դատարանի 1650 թ. մի արձանագրությունից տեղեկանում ենք, որ 1649 թ. հոկտեմբերի 8-ին Սնյատինում լվովցի վաճառական Ստադնիցկու եւ սուչավացի հայ Թորոս Ախանտովիչի միջեւ կնքվել է պայմանագիր, որի համաձայն՝ վերջինս պարտավորվել է Ստադնիցկուն մատակարարել «700 եզան եւ հորթի կաշի՝ Լվովի տոնավաճառից մեկ շաբաթ առաջ»[46]: Այս տեղեկությունները վկայում են սեկի կաշվի առեւտրում սուչավացի հայերի ունեցած զգալի դերի մասին:

Մեր ձեռքի տակ եղած փաստաթղթերը հնարավորություն չեն ընձեռում որոշակիորեն եզրակացնելու, թե ո՞ր դեպքում են սեկն ու կաշին վաճառել իրենք՝ արհեստավորները, եւ ո՞ր դեպքում՝ վաճառականները: Բայց նկատի ունենալով այդ ժամանակաշրջանի արհեստագործության եւ առեւտրի զարգացման մակարդակը՝ կարելի է ենթադրել, որ սուչավացի հայերի մի մասը զբաղվում էր ոչ միայն վաճառքով, այլ նաեւ կաշվի մշակությամբ եւ սեկի արտադրությամբ (հայերը դեռ հնագույն ժամանակներից հայտնի են եղել որպես կաշեգործ եւ սեկագործ վարպետներ): Լեհաստանի եւ Արեւմտյան Ուկրաինայի հայկական գաղթավայրերի պատմությանը վերաբերող տեղեկությունները հիմնավորում են, որ այստեղ հենց հայ սեկագործ վարպետներն են եղել այդ արհեստի հիմնադիրները[47]: Լվովում նույնպես ամենահայտնի կաշեգործները հայերն էին: Մեծ հռչակ էին վայելում նաեւ Սնյատինի եւ արեւմտաուկրաինական մյուս քաղաքների հայ կաշեգործները: Լվովցի հայ վաճառականները Սուչավայի որակյալ սեկը վաճառում էին երկրի տարբեր քաղաքներում: Այսպես օրինակ՝ 1633 թ. լվովահայ Բեղրոս Լուսիկովիչը եւ Նիկոլայ Օվանիշովիչը Յագլովեցում գնում են 1700 կաշի, որոնց մեջ կային «200 սուչավական սեկեր», եւ տանում են Յարոսլավ քաղաքում վաճառելու[48]:

41 ЦГИА УССР, г. Львов, ф. 52, оп. 3, Акты войтовского суда, кн. 406, Г. 102, Сп. 106, кн. 398, Г. 1676, հտ. 1962:

42 Տե՛ս “Акты городского суда”, ф. 52, оп. 3, кн. 246, թ. 1584:

43 Տե՛ս **N. Iorga**, Relatiilecomerciale ale Terilornoastre cu Lembergul, Regestesidocumente din archiveleorasului Lemberg, partea I, Bucurest, 1900, էջ 113:

44 ЦГИА УССР, г. Львов, Акты городского суда, ф. 52, оп. 3, кн. 246, թ. 131:

45 Տե՛ս **W. Lozinski**, Patrycyatimieszczanstwolwowskie w XV i XVII wieku, Lwow, 1902, էջ 331:

46 ЦГИА УССР, г. Львов, Акты войтовского суда, кн. 401, թ. 1321-1322:

47 Տե՛ս **Я. П. Кись**, Участие армян в развитии ремесла г. Львова в XV-XVII вв., сб. материалов §Ист. Связи и дружба украинского и армянского народов:, Киев, 1965, էջ 6:

48 Տե՛ս անդ, էջ 137:

Արեւմտաւկրաինական տարբեր քաղաքներում մոլդովական եւ թուրքական սեկի մանրածախ առեւտրով էր զբաղվում լվովցի հայ վաճառական Գաբրիել Մախիցիովիչը[49]: Սուչավայի հայերը Լվով էին ներմուծում նաեւ մոլդովական եւ հունական գինիներ, համեմունքներ եւ արեւելյան կերպաս: 1565 թ. սուչավացի հայ Յզարիկը մեղաքս է տանում Լվով[50]: Հետաքրքիր է նաեւ, որ 1578-1579 թթ. Լվովի մաքսային մատյաններում գրանցված է Սուչավայի հայ վաճառականների կողմից «մալվազիա» գինու ներմուծումը[51]: Մեկ այլ՝ 1584 թ. փաստաթղթից տեղեկանում ենք, որ սուչավացի հայ Իոսիֆ Պոպովիչը Սնյատինում սեկ եւ արեւելյան ապրանքներ էր վաճառում[52]: Ինչպես երեւում է այն ժամանակվա փաստաթղթերից, սուչավացի հայ վաճառականները մոլդովական եւ արեւելյան ապրանքներ էին վաճառում ոչ միայն Լվովում, այլեւ Կամենեց-Պոդոլսկում, Յարոսլավում, Սնյատինում, Յազլովեցում եւ այլ քաղաքներում[53]: Սուչավայի հայերը Լվովից Մոլդովա էին տանում հիմնականում երկաթ[54], զանազան տեսակի մահուդ, բամբակյա գործվածքներ եւ այլն: Փաստացի փվյալներից կարելի է ենթադրել, որ Սուչավայի հայ բնակչությունը կարեւոր դեր էր խաղում քաղաքի տնտեսական կյանքում, իսկ հայ վաճառականները նպաստում էին արեւմտաւկրաինական քաղաքների հետ ապրանքափոխանակության ընդլայնմանը:

Այս շրջանում հայկական խոշոր գաղութ կար Յաշում: Ստեֆան Գ. Մեծի կառավարման շրջանում Յաշում բնակվում էր մոտ 600 հայ ընտանիք[55]: Իտալացի կաթոլիկ քարոզիչ Մանչինելլին, որը 1580 թ. եղել էր Յաշում, հաղորդում է, որ քաղաքում ապրում էին շատ հայեր[56]: Յաշում հայոց դպրարանի գոյության վերաբերյալ առաջին փաստական վկայությունը Կամենեց-Պոդոլսկի հայոց դպրարանի մատյաններում 1574 թ. հուլիսի 13-ի արձանագրությունն է[57]: Ավելի ուշ շրջանի փաստաթղթերում եւս հիշատակություններ են հանդիպում հայ շոլտուզների մասին[58]: Մ. Բանդինին հիշատակում է, որ Յաշում 1640 թ. կար հայկական երկու եկեղեցի[59]: Նշենք, որ ԺԶ.-ԺԷ. դդ. Սուչավան եւ Յաշը դառնում են հայ եպիսկոպոսի նստավայրը[60]: Յաշի հայերի մեջ կային վաճառականներ, արհեստավորներ, ոսկերիչներ[61] եւ այլն: Հայերից ոմանք հայտնի էին որպես

49 Անդ:

50 Տես **В. В. Грабовецкий**, Армянские поселения на западноукраинских землях, сб. материалов §Ист. Связи и дружба украинского и армянского народов:, էջ 141:

51 Տես **R. Rybarski**, Handel i polityka handlowa Polski w XVI stuleciu, II, Poznan, 1928, էջ 257:

52 ЦГИА УССР, г. Львов, Акты городского суда, ф. 52, оп. 3, кн. 246, թ. 1086:

53 Տես անդ, ф. 52, оп. 3, кн. 390, թ. 636-637, кн. 399, թ. 1315, кн. 246, թ. 1086:

54 Տես **R. Rybarski**, նշվ. աշխ., էջ 233:

55 Տես **N. Sutu**, Notions statistiques sur la Moldavie, էջ 29:

56 Տես **E. Hurmuzaki**, Documente, v. XV, N. CXCII, էջ 116:

57 Տես **В. Р. Григорян**, Об актовых книгах армянского суда г. Каменец-Подольска (XVI-XVII вв). «Восточные источники по истории народов юго-восточной и центральной Европы», Москва, 1964, էջ 290:

58 Տես **E. Hurmuzaki**, Documente, v. XV, N. CCCCLX, էջ 237, N. MCCCCXXXV, էջ 727-728:

59 Տես **V. A. Urechia**, Codex Bandinus. An. Ac. Rom., seria II, v. XVI, էջ 250:

60 Տես **Vlad Banateanu**, Armenii in istoriasi in viata Romineasca, էջ 24:

61 Տես **N. Bogdan**, Orasul Iasi, 1913, էջ 341:

հմուտ դեղագործներ, որոնք պատրաստում էին զանազան դեղեր եւ անուշահոտ քսուկներ[62]: ԺԶ.-ԶԷ. դդ. մոլդովական պետության մայրաքաղաք Յաշը առեւտրի խոշոր կենտրոնն էր եւ, ինչպես արդեն նշել ենք, կաշեգործական բավականաչափ զարգացած արտադրություն ուներ: 1621 թ. Զամոստիեւ քաղաքից հայ վաճառական Վարդերիսը Յաշում գնում է «1200 կամ 1300 սեկի կաշի»[63]: Իսկ լվովցի Զախարիաշ Եմիրովիչը 1668 թ. դատարանում հայտնում է, որ «ինքը պարոն Դոմինիկի հետ Յաշում գնել է սեկ, որը հետո բաժանել են իրար մեջ»[64]: Յաշի հայ վաճառականները Լվով եւ արեւմտաուկրաինական այլ քաղաքներ էին տանում նաեւ արեւելյան կերպաս: 1588 թ. մի փաստաթուղթ վկայում է, որ Յաշ քաղաքի հայ բնակիչ Վարդիկը այդ ժամանակ Լվովում արեւելյան կերպաս էր վաճառում[65]: 1591 թ. Լվովում եւ Կամենեց-Պոդոլսկում արեւելյան ապրանքների առեւտուր էր անում Յաշ քաղաքի բնակիչ Մուրադը[66]: Իսկ Լվովում Յաշի հայ վաճառականները գնում էին զանազան որակի մահուդ, ոսկերչական իրեր եւ թանկարժեք քարեր: 1614 թ. ապրիլի 27-ին Յաշում պայմանագիր են կնքում վալախացի մաքսային աշխատող Կանդիմ Վրանաշը եւ Լվովի հայ վաճառական Անդրեյ Թորոսովիչի ներկայացուցիչը. վերջինս պարտավորվում էր Վրանաշին մատակարարել 280 թոփ զանազան որակի մահուդ: Լվովից գյուղատնտեսական գործիքներ փոխադրելու համար պայմանագրեր էր կնքում Յաշի հայ բնակիչ Գարգաշովիչը: Այսպես՝ 1652 թ. նա լվովցի Իսահակ Լազարովիչի հետ կնքում է պայմանագիր, որով պարտավորվում էր Սնյատինի տոնավաճառի համար Գարգաշովիչին մատակարարել երեք «ֆասա» գերանդի[67]:

Ուշագրավ է նաեւ այն փաստը, որ լվովահայ վաճառականները Յաշում ունեին իրենց ներկայացուցիչները, որոնք առեւտրական զանազան գործարքներ էին կնքում տեղի վաճառականների հետ: Լվովի հայոց դատարանի 1594 թ. մի արձանագրության համաձայն՝ լվովցի հայ Դավիթ Սերեկովիչը համաքաղաքացիներ Մուրադ Նորրեգի եւ Սերպեր Նուրիդիանովիչի հանձնարարությամբ առեւտուր էր անում Յաշում եւ մոլդովական այլ քաղաքներում[68]: Նույն այդ Դավիթ Սերեկովիչը 1594 թ. Մոլդովա, մասնավորապես Յաշ է բերում մեծ քանակությամբ մահուդ, մարգարիտ, արծաթյա գավաթներ եւ այլ ապրանքներ, իսկ Յաշում գնում է կաշի ու մետաքս[69]: Արեւմտաուկրաինական քաղաքների հետ Յաշի հայ վաճառականների առեւտրական կապերի մասին են վկայում բազմաթիվ պարտամուրհակներ: 1576 թ.

62 Տե՛ս **E. Hurmuzaki**, Documente, v. XI, N. CXCII, էջ 113-116, v. XV, N. MDCLIX, էջ 816:

63 ЦГИА УССР, г. Львов, Акты войтовского суда, ф. 52, оп. 3, кн. 395, թ. 666-667:

64 Անդ, кн. 406, թ. 102-106:

65 Տե՛ս **N. Iorga**, Relatiile comerciale ale Terilor noastre cu Lembergul, Regeste si documente din archivele orasului Lemberg, partea I, Bucurest, 1900, էջ 88:

66 Տե՛ս ЦГИА УССР,г. Львов, Акты войтовского суда, ф. 52, оп. 3, кн. 385, թ. 759-760:

67 Տե՛ս անդ, кн. 402, թ.1998-2000:

68 Տե՛ս ЦГИА УССР, г. Львов, Армянского суда, ф. 52, оп. 3, кн. 515, թ. 823-831, кн. 516, թ. 121-123, 278-281, 413-415:

69 Տե՛ս անդ, ф. 52, оп. 3, кн. 515, թ. 823-832:

կազմված մի պարտավորագրի համաձայն՝ Յաշի հայ բնակիչ Դրագիչը գործարար կապեր է հաստատում Կամենեց-Պոդոլսկի հայ վաճառականների հետ[70]: Լվովահայ վաճառական Նորբեգ Պոպովիչը 1598 թ. առեւտրական գործարքներ է կնքում Յաշի իր հայրենակիցներ Խաբարուկի եւ Նիկոլոնի հետ[71]: Լվովցի վաճառական Ֆրեդերիկ Պենսի 1568 թ. կազմած՝ վարկատուների եւ պարտատերերի ցուցակում հիշատակված են նաեւ հայ վաճառականներ Զադիկը՝ Յաշ քաղաքից, Թոդորը՝ Սուչավայից եւ այլք[72]:

Ըստ պահպանված տեղեկությունների՝ Յաշի հայ բնակչությունը նպաստում էր քաղաքի տնտեսական զարգացմանը եւ արեւմտաուկրաինական քաղաքների հետ կապերի ամրապնդմանը:

Ռումինական մյուս նշանավոր քաղաքը, որ ԺԶ.-ԺԷ. դարերում բնակեցված էր հայերով, Բոտոշանն էր: Լվովի դատարանի 1574 թ. արձանագրություններից մեկի համաձայն՝ լվովցի հայ Միկո Յակուբովիչը ձուկ էր գնել բոտոշանցի հայերից[73]: Նույն դատարանի 1623 թ. մի արձանագրությունից երեւում է, որ Կամենեց-Պոդոլսկի բնակիչ Իվաշկո Լուկաշովիչը 3 «կուֆա» ձուկ էր գնել բոտոշանցի հայ Նիկոլայ Նիգոլիից[74]: Դատարանի 1646 թ. մի արձանագրության համաձայն՝ լվովցի վաճառական Իվաշկովիչը բոտոշանցի հայ վաճառական Դրագանից գնել էր «երկու հարյուր քար ձուկ»[75]: Քննարկվող ժամանակաշրջանում արեւմտաուկրաինական քաղաքների հետ առեւտրական կապեր էին հաստատում նաեւ մոլդովական մյուս քաղաքների հայ բնակիչները, օրինակ՝ Պոպան՝ Տիրգովիշտե քաղաքից[76], Վարդանը՝ Ռոմանից[77], Մատին՝ Խոտինից[78] եւ այլք: Ռեչ Պոսպոլիտայում բնակվող հայ վաճառականները երկրում ազատ առեւտուր անելու երաշխիք էին ստանում մոլդովական իշխաններից: Օրինակ՝ 1614 թ. իշխան Ստեֆան Տոմշան Լվովի քաղաքային իշխանություններին գրած իր ուղերձում խնդրում է հայտնել տեղի վաճառականներին, այդ թվում նաեւ հայերին. «Հրաման է տրված այդ վայրերի պիրկալաբներին, որ նշված վաճառականներն իրենց ապրանքներով երկրում տեղաշարժվեն ազատորեն»[79]:

Ի մի բերելով՝ կարող ենք նշել, որ Մոլդովայի մի շարք քաղաքների հայ բնակչությունը նկատելի դեր է խաղացել երկրի տնտեսական զարգացման գործում, եւ անժխտելի է, որ հայ վաճառականների գործունեությունը նպաստել է հարեւան պետությունների, արեւմտաուկրաինական քաղաքների հետ պատմական կապե-

70 Տե՛ս **N. Iorga**, Studiisi documente, v. XXIII, doc. CLXXXVII, էջ 355:

71 ЦГИА УССР, г. Львов, Армянского суда, ф. 52, оп. 3, кн. 517, թ. 135-141:

72 Տե՛ս անդ, г. Львов, Акты городского суда, ф. 52, оп. 3, кн. 227, թ. 488-489:

73 Տե՛ս անդ, г. Львов, Акты войтовского суда, ф. 52, оп. 3, кн. 381, թ. 917:

74 Անդ, ф. 52, оп. 3, кн. 396, թ. 75-77:

75 Անդ, ф. 52, оп. 3, кн. 401, թ. 1654:

76 Տե՛ս **E. Hurmuzaki**, Documente, v. XV, էջ 39:

77 Տե՛ս **N. Iorga**, Studiisi documente, v. XXIII, doc. CLXIX, էջ 349:

78 Տե՛ս **В. Р. Григорян**, Об актовых книгах армянского суда г. Каменец-Подольска (XVI-XVII вв). «Восточные источники по истории народов юго-восточной и центральной Европы»,էջ 291:

79 **E. Hurmuzaki**, Documente, v. XV, էջ 39:

րի ամրապնդմանը: Առեւտրական կապերի ընդլայնումը նպաստել է նաեւ ռումինահայ համայնքների ամրապնդմանն ու զարգացմանը: Դրա վառ ապացույցն այն է, որ ռումինահայ համայնքներում կառուցվում էին եկեղեցիներ, ինչպես նաեւ Սուչավա եւ Յաշ քաղաքներում փոխնիփոխ հաստատվում էին եպիսկոպոսական աթոռներ: Հայերի դիրքը Ռումինիայում այնքան էր ամրապնդվել, որ նրանք իրենց ազդեցությունն էին թողնում նաեւ ճարտարապետության վրա (խոսքը ոչ միայն եկեղեցական շինությունների, այլ նաեւ բնակելի կառույցների ճարտարապետության մասին է):

РЕЗЮМЕ

После падения Ани в 1045 г. множество армян переселились оттуда в Крым, а затем в Польшу, где создали сильную колонию с религиозным и культурным центром во Львове.

Армянское население Молдовы сыграло заметную роль в деле экономического развития страны. Деятельность армянских торговцев способствовала укреплению исторических связей с соседними странами, западноукраинскими городами. Расширение торговых связей способствовало также укреплению и развитию армянских колоний Румынии. Здесь воздвигались церкви, в городах Сучава и Яссы были основаны епископские кафедры. Положение армян в Румынии со временем упрочилось настолько, что они оказали заметное влияние и на архитектуру, как церковную, так и светскую, гражданскую.

SUMMARY

After the collapse of Ani in 1045, a great number of Armenians migrated to the Crimea, and from there to Poland, where they found a strong community making the city of Lviv as a religious and cultural center.

Armenian inhabitants of Moldova had an important role in the economic development of the country, and the activity of Armenian merchants contributed to the strengthening of historical relations with neighboring countries and western Ukrainian cities. The expansion of trade relations contributed also to the strengthening and development of Romanian-Armenian communities, where churches were built, and episcopal sees were established in the cities of Suceava and Iasi. In Romania, Armenians had such strong positions that they could influence on the architecture, too (it refers not only to the architecture of churches, but also to dwelling houses).